«ԿՐԱՔԱՐ» ՍՊԸ

ՀՀ, Երևան, Կոմիտաս 59/7շենք, 71բն.
Հեռ. +37496666656, էլ. փոստ levonavetisyan1987@gmail.com

«03» հուլիսի 2025թ.

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար

պարոն Ա. Ավետիսյանին

Հարգելի՛ պարոն Ավետիսյան,

Հայտնում եմ, որ «Կրաքար» ՍՊԸ-ն ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի տարածքում՝ 03-013-0561-0116, 03-013-0561-0115, 03-013-0561-0015, 03-013-0561-0085 և 03-013-0561-0084 կադաստրային ծածկագրով հողամասերի 59.8 հա տարածքի վրա, ցանկանում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, իսկ հյուսիս արևմտյան մասում 5.4 հա՝ օգտակար հանածոյի արդյունահանում՝ (ընդերքօգտագործում):

ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով նախատեսվող գործունեության համար ներկայացնում եմ ծանուցում և խնդրում եմ սահմանված կարգով իրականացնել հանրային լսումներ և տալ համաձայնություն՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը

Գործունեության նախաձեռնողը «Կրաքար» ՍՊ ընկերությունն է: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «Կրաքար» ՍՊ ընկերության գրանցման համարն է 278.110.1357974, գրանցման ամսաթիվը՝ 12.12.2023թ., գտնվելու վայրը՝ ք.Երևան, Էրեբունի Խորենացու փող. 221/36 :

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.

3108

«Կրաքար» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի մարզի տրավերտինների երկրաբանական ուսումնասիրություններ մոտ 59.8հա տարածքում, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները ներառում են հետևյալ գործողությունները՝ տոպոհանույթ, երկրաբանահանութային աշխատանքներ, հետախուզական հորատում, փորձնական բացահանքի անցում և փորձնական արդյունահանում, նմուշարկում, լաբորատոր փորձարկումներ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2025 թվականի 4-րդ եռամսյակ - 2028թ.-ի ժամանակաշրջանի ընթացքում:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանի հավելվածով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական պաշտպանության գոտի:

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովան պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, հանքախորշ, մուտքային ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ բետոնապատ պատերով հորում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով : Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով :

- Խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա :
- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում :
- Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով տեղամասի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:
- Աշխատանքների ընթացքում կիրառել պատահական գտածոների ընթացակարգը :

3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

Աշխատանքները կատարվելու են Արարատ խոշորացված համայնքի Ավշար բնակավայրի վարչական սահմաններում՝ 03-013-0561-0116, 03-013-0561-0115, 03-013-0561-0015, 03-013-0561-0085 և 03-013-0561-0084 կադաստրային ծածկագրով հողամասերում: Հայցվող տարածքը գտնվում է Ավշար բնակավայրի կենտրոնից մոտ 3.5կմ արևելք-հյուսիս-արևելք:

Տնօրեն՝ Տ.Մելոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿՐԱԿԱՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՐԱԿԱՐ KRAQAR 00523332